

խորհուրդ է հարցնում, պատրաստ է բրմահայր իր բարի
խորհուրդներով և միջնորդութիւնով, և շատ անգամ էլ նիւ-
թականով, կատարել իր ազգային բարոյական պարտքը: Սա-
կայն մի այլ կարևոր բան որ պակսում է՝ մեր ազգային լե-
զուի համար անփոյթ մնալն է: Հունենալով ազգային մի ու-
սումնարան և ընթերցարան, Բրմաստանայ ապագայ սե-
րունդը գրկուել է ազգային լեզուից և լաւ ապագայ չէ խոս-
տանում...

Համալրում քահ. Ս. Վարդանեանց

Ա Մ Պ Ը

Ամպ լուսեղէն, ուր երազներս ապրեցան,
— երկինքին մէջ, լուսնին աշխարհն արծաթի—
Ու քեզի հետ փըշրած կ'իյնան ցիրուցան.
Այդ փըշրանքէն տաք-տաք արցունք կը կաթի:

Բաժնուելով քու շողերէդ մըտերիմ,
Հովերուն բիրտ հարուածին տակ կը փըրթիս.
Կեանքդ երկինքն էր. հողը կըլլայ քեզ շիրիմ,
Ուր թաղուեցան հուր տենչանքներն իմ սըրտիս:

Եւ կը ժպտին վերէն արևն ու եթեր
Մեր վիշտերուն անկարեկիր ու անփոյթ,
Փայփայելով թևերնուն մէջ նոր ամպեր,
Նոր սարսուռներ և երազներ ջինջ կապոյտ.

Մինչ մենք զոհեր սիրոյ անհուն պապակին՝
Անձրև կ'ուլատ դուն, ես՝ արցունք ցաւազին:

Սիսիլ